

Ի՞Զ ԿԵՐՊ ՀՆԱՐԱՒԽՈՅ Է ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԸ.

ՄԵՆՔ կը գետեղենք «Արարատի» առաջիկայ համար-  
ներում մի շարք յօդուածներ, որոնց նպատակը կը լինի  
տալ ընթերցողին կարևոր տեղեկութիւններ լեզուների  
հնգերովական ընտանիքի մասին, ցոյց տալ հայերէնի  
գրաւած տեղը այդ ընտանիքում և նրա յարաբերութիւնը  
դէպի մի քանի ոչ հնգերովական լեզուներ, այլև ծանօթաց-  
նել այն ուսումնասիրութիւնների հետ, որոնք կատարուած  
են հայերէնի վերաբերմամբ Խոկ այժմ հրապարակի վերայ  
ենք գնում մի կարեոր հարց, որի լուսաբանութիւնը և  
լուծումը աշխատում ենք տալ ներկայ յօդուածով:<sup>\*</sup>)

I. Ե՞նչ է հայերէնը կամ հայոց լեզուն.—Հայերէնը  
կամ հայոց լեզուն այն լեզուն է, որով խօսում է հայ ժո-  
ղովուրդը: Եյդ լեզուն գործածական է ներկայումս, բայց  
նա ունի իւր անցեալը և անշուշտ կը շարունակուի գոր-  
ծածուել և ապագայում:

Սակայն ո՞ր լեզուն է այդ «հայերէնը», արդեօք գրա-  
բարը, աշխարհաբարը և յատկապէս ո՞ր աշխարհաբարը,  
թէ մի այլ լեզու: Ոչ այս, ոչ այն և ոչ երբորդը:

«Հայոց լեզուն» կամ «հայերէնը» աբստրակցիա է,  
նա այսպէս ասած գումարն է այն բոլոր անհատների լե-  
զուների, որոնցից կազմում է հայ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը կազմող իւրաքանչիւր անհատ ունի  
միանգամայն ինքնուրոյն և ուրոյն լեզուն. չկայ մի  
անհատ, որ բոլորովին միևնույն լեզուն գործածի, ինչ որ  
մի ուրիշ անհատ և այդ պատճառով անհատական լեզու-  
ների մէջ նոյնութիւն չէ կարող լինել: Սակայն անհատական  
լեզուների մէջ միշտ կը լինի նմանութիւն:

\* ) Ցանկալի է, որ այս յօդուածի ընթերցանութեան ժամա-  
նակ ինկատի առնուի մեր «ինչ է լեզուաբանութիւնը» յօդուածը  
«Արարատի» սոյն թուի փետրուար Հ.-ում:

Շնորհիւ զանազան սոցիալական պատմական պայմանների ամեն մի լեզուի (այնպէս և հայոց լեզուի մէջ) առաջանում են նման անհատական լեզուների խմբակցութիւններ, որոնք աւելի կամ նուազ շափով տարբերում են այլ անհատական լեզուների խմբակցութիւններից։ Այդ խմբակցութիւններից մի քանիսը իրենց հերթին ունենում են իրար հետ նմանութեան աւելի շատ գծեր, քան միւսները և այդպիսով առաջանում են լեզուական աւելի մեծ խմբակցութիւններ, որոնց գումարը կը լինի այն ժողովրդի լեզուն, որի բոլոր անդամները այս կամ այն տարբերութեամբ գործ են ածում նման լեզու։

Այսպէս են առաջանում անհատական լեզուներից ենթաբարառներ, բարբառներ և ընդհանուր «լեզու», որ վերագրուում է ամբողջ ժողովրդին։

Պարզ է, որ հայերէնը կամ հայոց լեզուն հայ ժողովրդի գործածական բոլոր բարբառներէ, ենթաբարառների եւ այլ լեզուական աւելի փոքր խմբերի գումարն է։

Սովորական գործածութեամբ այս կամ այն ժողովրդի լեզու ասելով հասկացւում է ոչ թէ այդ ժողովրդի լեզուն վերոյիշեալ մտքով, այլ այդ լեզուի մի որեւէ բարբառը, որ շնորհիւ զանազան պատմական և քաղաքական հանգամանքների գրական գործածութիւն է ստացել, ուրիշ խօսքով՝ այդ ժողովրդի գրական լեզուն, որ մեծ մասամբ լինում է եւ պետական-պաշտօնական։

Այսպէս օրինակ հայերէն ասելով հնում հասկացւում էր գրաբարը, իսկ այժմ աշխարհաբարը—մեզնում կովկասում՝ արևելեան, իսկ թիւքահայաստանում՝ արևմտեան աշխարհաբարը։ «Ուուսերէն» կամ «Ուուսաց լեզու» տերմինը սովորական գործածութեամբ վերաբերում է սուսաց արդի գրական, միևնույն ժամանակ և պետական լեզուն, որ առաջացել է վելիկուուսական մի ենթաբարբառից (Մուկուայի), որ իր մէջ ընդունել է բառեր և ձևեր հին եկեղեցական լեզուից կը լին, Մենք իհարկէ գործ ենք ածում «հայերէն» կամ «հայոց լեզու» տերմինը վերև բացաբաժն մտքով, հասկանալով նրա տակ հայոց լեզուի ամբողջ ծա-

ւալը, այսինքն բոլոր բարբառները իրենց մանրամասնութեամբ:

Ա. Ինչ է հայոց լեզուի ուսումնասիրութիւնը — Այժմ հասկանալի է, թէ մենք ինչ ի նկատի ունենք, երբ խօսում ենք հայերէնի ուսումնասիրութեան մասին։ Հայերէնի ուսումնասիրութիւնը վերաբերում է ոչ աշխարհարարին եւ ոչ գրաբարին, այլ հայ լեզուի ամբողջ ծաւալին, ընդպրկելով ոչ միայն ներկայի, այլ եւ անցեալի բարձառները. ուրիշ խօսքով հայերէնի ուսումնասիրութիւնը պետք է վերաբերի հայոց լեզուի պատմութեան (այսինքն նրա նախապատմական և պատմական շրջանին) և ներկային. մեղ համար կարեոր է ուրիշն կազմել հայոց լեզուի պատմական եւ նկարագրական քերականութիւնը։

Այժմ տեսնենք, թէ ինչ եղանակով պէտք է կառուցուի այդ հսկայական շէնքը։ Սա մեթոդողիական խիստ կարևոր հարց է, որին անհրաժեշտ է անմիջապէս պատասխաննել։ Այդ հարցի պատասխանը մենք պէտք է վնասուենք հնդկրոպական լեզուաբանութեան մէջ, ոչ միայն այն պատճառով, որ հայերէնը նոյնպէս հնդկրոպական լեզու է, այլ և այն պատճառով, որ լեզուի ամբողջական ուսումնասիրութեան հեռանկարը տուել է մեղ այդ գիտութիւնը։

Եթէ մենք վերցնենք արդի Աշտարակ գիւղի լեզուն, մենք նրա մէջ մի կողմից կը տեսնենք մի ամբողջութիւն, իսկ միւս կողմից կը նկատենք բարբառական տարրերութիւնների սաղմերը։ Եթէ Աշտարակցիք ժամանակի ընթացքում աճելով տարածուեն և հիմնեն տասնեակ գիւղեր, այդ վերջինների աղղաքնակութեան լեզուի մէջ արդէն կը նկատուի համեմատաբար աւելի զգալի բարբառային տարրերութիւններ։ Այդ տարրերութիւնները կարող են շատ մեծանալ, եթէ աղղաքնակութեան թիւը և տերրիտորիան աւելի մեծանայ։ Դարերի ընթացքում այդ բարբառներից կարող են նոյնիսկ անկախ լեզուներ առաջանալ։ Այդ բոլոր բարբառների և լեզուների համար արդի Աշտարակի լեզուն կը համարուի նախալեզու։

Այդ անալոգիայով ըմբռնելի կը լինի մեզ համար, որ հայերէնը նոյնպէս ունեցել է իւր նախալեզուն։ Հայկական նախալեզուն (կամ դոնէ նրա հիմնական շերտը) եղել է հնդերոպական նախալեզուի մի բարբառը, ինչպէս և յունական, հնդկական և այլ նախալեզուները։ Այդպիայով հայերէնի ուսումնասիրութիւնը սկսելով հնդերոպական նախալեզուից, պէտք է հետեւ հայերէնի զարգացման փոփոխութիւններին կամ էւոլյուցիային մինչև մեր օրերը։ Բայց չէ որ մեզ անյայտ է ինչպէս հնդերոպական, այսպէս և հայկական նախալեզուն, մեզ անյայտ է և հայերէնի էւոլյուցիայի ամրող ընթացքը։ Ի՞չպէս կազմենք ուրեմն հայերէնի պատմական քերականութիւնը։

Դրա համար մենք ունենք յենակէտ և այդ յենակէտը ներկայիս հայերէն լեզուն է, այսինքն հայ բարբառների ամբողջութիւնը։ Եթէ մեզ յայտնի են այդ բարբառների գիտական ուսումնասիրութեան, այսինքն բարբառանութեան հետեւանքները, մենք նրանց համեմտառութիւնից կարող են հիւսել հայոց լեզուի պատմութիւնը։ Բայց հայերէնի ուսումնասիրութեան գործն ունի և այլ օժանդակ եւ լրացուցիչ միջոցներ։ որանից առաջինը զրարարն է։ Գրաբարը հայերէնի բարբառներից մէկն է, որ զրի է առնուած միւս բոլոր բարբառներից առաջ եւ դարում և կարող է մեր համեմտական ուսումնասիրութեան եզրակացութիւնները հաստատել և շատ դէպքում լրացնել (զիսաւորապէս նրանով, որ զրաբարի մէջ սպրդել է ժամանակի ընթացքում լեզուական նիւթ զանազան բարբառներից, այսինքն մեր արդի բարբառների նախնիքից)։

Երկրորդ օժանդակ միջոցն է հայերէնի ազգակից հընկերոպական լեզուների համեմտական ուսումնասիրութիւնը, որից միայն կը պարզուի հայերէնի յարաբերութիւնը դէպի հնդերոպական նախալեզուն և դէպի ազգակից հնդերոպական լեզուները (հնդկերէն, իրաներէն, յունարէն, գերմաներէն ևն.)։

Երրորդ օժանդակ միջոցն է այն լեզուների ուսումնասիրութիւնը, որոնց ազդեցութեան ենթարկուել է հայերէնը,

ընդունելով նրանցից բազմաթիւ բառեր և ոճեր, այլ և նոյնիսկ քերականական ձևեր և հնչիւնաբանական (ֆոնետիքական) լրացումներ։ Սյսպիսի լեզուներ են նախ այն ազգերի լեզուները, որոնք շփում են ունեցել հայերէնի հետ նախապատմական շրջանում (աւելի առաջ քան 7-րդ դարը ն. թ.), իսկ ապա նաև այն ազգերի լեզուները, որոնք հարևան են եղել հայերէնին պատմական շրջանում։

III. Ի՞նչ չափով է ուսումնասիրուած հայերէնը մինչեւ այժմ։ Հայերէնի գիտական ուսումնասիրութեան սկիզբը դրուեց այն օրը, երբ Բեռլինի համալսարանի պոեֆեսոր Պետերման հրատարակեց իւր հայերէնի (իսկապէս—գրաբարի) ուսումնասիրութիւնը հնդերոպական տեսակէտից—Grammatica linguae Armeniacae (Բեռլին, 1837)։ Այնուածակ բազմաթիւ եւրոպացի և հայ գիտնականներ շարունակեցին Պետերմանի գործը և այժմ հայկական լեզուաբանութիւնը կարող է թուել հարիւրաւոր մեծ ու փոքր ուսումնասիրութիւններ։

Ենչի՞ն են վերաբերում կատարած ուսումնասիրութիւնները։ Մինչև այժմ ուսումնասիրուած են

1) Գրաբարը. Նկատենք նախ, որ գրաբարի ուսումնասիրութիւնը շատ հին է և մինչև հնդերոպական լեզուաբանութեան շրջանը (19-րդ դարը) կատարուել է յոյն քերականների հետևողութեամբ, սակայն այդ ուսումնասիրութիւններն արդի գիտութեան տեսակէտից անարժէք են։

Հնդերոպական և առհասարակ համեմատական տեսակէտով գրաբարը—յատկապէս ոսկեդարի շրջանը—ուսումնասիրել են շատ նշանաւոր գիտնականներ։ Պետերման, Դըլագարդ, Ֆր. Միւլեր, Հիւլցման, Բարթոլոմէ, Մէյէ, Փեդերսոն ևն. այսպիսով գրաբարը ուսումնասիրուած է բազմակողմանի կերպով և անշուշտ դեռ երկար ժամանակ ուսումնասիրութեան նիւթ կը ծառայի գիտնականներին նաև ապագայում։

2) Արդի հայ բարբառները. Հայ բարբառաբանութեան հիմնադիր պէտք է համարել պոռֆ. Ք. Պատկանեանին, \*)

\*) Ք. Պատկանեանից առաջ էլ եղել են հայ բարբառների ուսումնասիրութեան փորձեր, բայց քիչ արժեքաւոր։

որ զեռ 1864 թ. շեշտելով հայ բարբառների ուսումնասիրութեան կարևորութիւնը, 1866 թ. սկիզբ դրեց նրանց ուսումնասիրութեան մի զերմաներէն յօդուածով Ազուլիսի բարբառի մասին։ Այսունետե ինչպէս ինքը Պատկանեան, այսպէս և ուրիշ գիտնականներ—Սարդսեան, Տոմսոն, Մաքրեան, Աճառեան են։ շարունակեցին բարբառների ուսումնասիրութիւնը և տուին մի շարք համեստ, բայց պիտանի գործեր։

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք նաև

3) Հայկական հին և միջին բարբառների ուսումնասիրութեան փորձեր (Այտընեան Քարտ), այն ժամանակ կարելի է տսել, որ մեզ յայտնի են հայ լեզուաբանութեան մինչև օրս տուած արդիւնքները։

Նկատենք նաև, որ

4) Հնդերոպական լեզուների ուսումնասիրութիւնը, որ ինչպէս տեսանք, օժանդակ միջոց է հայերէնի ուսումնասիրութեան համար, արել է հսկայական քայլեր։ իսկ

5) հայերէնի հարեան ոչ հնդերոպական լեզուների ուսումնասիրութիւնը զեռ սաղմային գրութեան մէջ է, կարելի է տսել—զեռ չէ սկսուած։

IV. Ինչ է մօնում ամենը, պարզ է, որ մինչև այժմ կատարուած ուսումնասիրութիւնը շատ չնշին է։ Նա վերաբերում է զլիսուորապէս դրաբարին, այսինքն հայերէնի մի բարբառին, թէպէս և շատ նշանաւոր բարբառին։ Գրտրարի վերաբերմաժը կատարած հետազօտութիւններն ունեն այն ընդհանուր թերութիւնը, որ դրաբարի վրայ նայել են մինչև այժմ որպէս հնդերոպական լեզուաբանութեան մի օժանդակ միջոցի վրայ։ դրաբարը զեռ չունի նոյն խոկուկեղարի շրջանի նկարագրական քերականութիւնը։ Միանգամայն ձշմարիտ է պոռֆ. Մառի կարծիքը, որ համեմատական մեթոդը գրաբարի նկատմամբ ի շարն են գործ դրել։

Աւելի աննշան է բարբառաբանութեան համար կատարուածը։ Այդ մասում զժբաղդաբար եւրոպացիք ոչինչ չեն արել \*): Մինչև այժմ կատարած փոքր ի շատէ լուրջ

\* ) Պետհրմանի Թիֆլիզի բարբառի ուսումնասիրութիւնը (1867 թ.) շատ հին և հարեանցի է։

ուսումնասիրութիւնները պատկանում են պռոֆ. Տոմսոնին և Մսերեանին, բայց այդ գործերում ևս մենք զբանում ենք մեթոդոգիական սխալ: Սխալը նրանում է, որ փոխանակ ներկայացնելու բարբառների կատարեալ պատկերը, մեր բարբառները ուսումնասիրողներն ընարել են մի շարլոն<sup>\*</sup>) — ցոյց տալ, թէ ինչ յարաբերութեան մէջ են գտնւում ուսումնասիրուղ բարբառի հնչիւնները և քերականական ձևերը զրաբարի հնչիւնների և ձևերի հետ: Սա բարբառների ուսումնասիրութեան համար միանգամայն երկրորդական խնդիր է, որ կարելի է և անտես առնել, բայց նոյնացուել է բարբառների ուսումնասիրութեան հետ:

Մսերեան գիտակցում է այդ սխալը<sup>\*\*</sup>), բայց այդ «մեթոդը» համարում է առայժմ յարմարագոյնը: Մենք համարում ենք այդ մեթոդը անյարմարագոյնը, ի նկատի ունենալով մանաւանդ այն թիւրիմացութիւնը, որ առաջանում է նրանից: — Ստացւում է այդ մեթոդից, բացի գուցէ Մսերեանի ուսումնասիրութիւնից (իսկ այդ՝ անշուշտ Մառի զգաստացուցիչ նկատողութեան շնորհիւ<sup>\*\*\*</sup>) այնպիսի տպաւրութիւն, որ զրաբարը հայկական նախալեզուն է և հետազօտողները ճգնում են բարբառների ամեն երևոյթ բացատրել զրաբարի օգնութեամբ: Մի քանիսը (Գաղանձեան, Աճառեան Մ. Դաւիթբէկ ելն.) առանց այլեւ այլութեան նոյնացքել են զրաբարը հին հայերէնի կամ նախահայերէնի հետ (օրինակներ — համարեա ամեն երեսում):

<sup>\*</sup>) Այդ շարլոնը ստեղծել և յանձնարարել է յետագայ հետազօտողներին Տոմսոն (տ. Историч. грамм. § 56). — Համեմ. Նահ. Հ. Գ. Մէն. «Արդի լեզուարանութիւնը», Հանդ. Ամս. 1898. էջ 253.

<sup>\*\*</sup>) Армянская диалектология, Москва, 1898. էջ 13.

<sup>\*\*\*</sup>) Նկատողութիւնը արուած է պատփ. Տոմսոնին (տ. Записки вост. отд. Имп. русск. археол. общ., V). Թէպէտ Տոմսոնն արգարանում է Մառի այդ նկատողութեան դէմ և փաստեր է բերում, որ չէ նոյնացնում զրաբարը նախահայերէնի հետ, բայց բազմաթիւ դէպքերում նա „обарм.“ տերմինը գործ է ածում ուղղակի զրաբարի տեղ, բերելով օրինակներ բացառապէս զրաբարից: Историч. грамм. соврем. армянск. яз. բացի § 56 և շար. §§ 164, 165 176 ելն:

Առանց տատանուելու կարելի է ասել որ հայ բարբառների ուսումնասիրողներից շատ քչերն են պարզել իրենց համար, թէ ինչպէս պէտք է կառուցուի հայերէնի ազագայ պատմական քերականութիւնը և ինչ պէտք է լինի դրա համար բարբառների կատարած դերը։ Գոնէ Տոմսոն, նոր «մեթոդի» հեղինակը, խիստ տարօրինակ ըմբռումն ունի այդ ինուրի, որ նա հիմք է դարձրել Թիֆլիզի բարբառի ուսումնասիրութեան և որ ճգնում է պաշտպանել Մառի իրաւացի յարձակման դէմ\*):

Ցիշեալ մեթոդովիքական թերութիւններից զերծ են եղել հին ուսումնասիրողները — Բ. Պատկանեան, Ս. Սարգսեանց և Հանուշ՝ Այսպիսով մենք տեսնում ենք, որ կատարուած է շատ քիչ բան և արածը, մանաւանդ բարբառների վերաբերմամբ, շատ պակասաւոր է։

Վ. Ինչ ձեւով ննարաւոր է ապահովել հայերէնի ուսումնասիրութեան յաջող ընթացքը։ — Հայերէնի ուսումնասիրութեան հերթական հարցն այժմ բարզառների ուսումնասիրութեան համոզմամբ պէտք է կատարուի հայութեան կենդրունում — Ս. Էջմիածնում, Ճեմարանում։ Այդ ուսումնասիրութիւնը պէտք է լինի ոչ թէ մասնաւոր անհատների գործ, այլ կոլլեկտիւ, կազմակերպուած ճեռնարկութիւն։ Գործի յաջողութիւնը Ճեմարանում կարող է ունենալ կատարեալ ազահովութիւն, եթէ միայն լինի գործի կարեռութեան գիտակցութիւնը։ Գործի յաջողութեան համար պահանջում է

1) Հայերէնի դասաւանդութեան ուժեղացումը Ճեմարանում և նրան գիտական հիմքերի վրայ գնելը։ Այս ամենազդակաւոր պայմանն է, բայց հեշտ իրագործելի Այս հանդամանքը կունենայ հետեւալ կարեոր հետեանքը։ Ճեմարանի ուսանողները կըստանան համապատասխան տե-

\* ) Համեմ. Մառի գրախօսականը — Зап. востр. отд. Имп. русск. арх. общ. V. էջ 307 և Տոմսոնի պատասխանը — Огвѣтъ па рецензію... էջ 9.

սական պատրաստութիւն և սեմինարական աշխատանքների ժամանակ կը ծանօթանան բարբառների ուսումնասիրութեան մեթոդներին և տեխնիկային նիւթի աեսատկի ընտրութիւնը և հաւաքելու եղանակներն իրենց համար պարզելուց և կարևոր հրահանգներ ընդունելուց յետոյ ուսանողներն ամառը հայրենիք վերադառնալով կը ձեռնարկեն աշխատանքի. եթէ ի նկատի ունենանք, որ ուսանողներ կարող են լինել Հայաստանի գանազան անկիւններից, դժուար չէ ենթագրել, թէ որքան հետաքրքիր և բազմակողմանի նիւթ կարող են հայթայթել նրանք միքանի տարուայ ընթացքում:

Ուսուցչին կը մնայ սեմինարական աշխատանքների ժամանակ նիւթը սկսուեմի վերածել և կոսպեկտիւ աշխատանքի շնորհիւ կամաց կամաց հայ բարբառաբանութեան շենքը զլուխ բերել:

Չենք կասկածում մի բոպէ, որ գա ամենամեծ ծառայութիւնը կը լինի, որ կարող է ձեռմարանը մատուցանել զիտութեան:

2) Ի նկատի ունենալով, որ նիւթի հաւաքելը բաւական չէ, պէտք է նաև հաւաքածը և մշակածը հրատարակել, անհրաժեշտ ենք գտնում, որ Ս. Էջմիածնի տպարանը ձեռք բերէ լեզուաբանութեան մէջ գործածուող բոլոր տառերն ու նշանները և հոգայ տպագրութեան ծախքերը. Միանգամայն պէտք է հրաժարուել հնչիւնները հայերէն տառերի միջոցով արտայայտելու մտքից և կանդառնել զիտութեան կողմից սրբագործուած և ներկայումս գործադրուող միջոցի՝ այսպէս կոչուած զիտական տրանսկրեպտիայի (տառադարձութեան) վրայ:

3) Գործի աւելի մեծ յաջողութեան համար կը պահանջուի ամառները երբեմն ուսուցիչներին անձամբ Հայաստանի այս կամ այն անկիւնն ուղերուել կամ արտասահման գնալ զիտական նպատակով: Այս պահանջուած ծախքերը պէտք է նախատեսուեն հիմնարկութեան կողմից:

4) Մենք կարող ենք ցոյց տալ և մի այլ միջոց, որի գործադրութիւնը սակայն համարում ենք ոչ անմիջական

հոգացողութեան առարկայ մօտաւոր ապագայում։ Դա ամսառուայ լեզուաբանական և յատկասէս բարբառաբանական դասընթացներ հիմնելն է մեր ստորին կարգի դրսուցների ուսուցիչների համար, որ կարող է միանալ անշարժ նոյնքան կարեւոր մանկավարժական դասընթացներին։

Մենք բոլորովին ապահով ենք, որ մեր առաջարկած միջոցը միակ ուսցիմնալ միջոցն է, որ գործադրւում է նաև այլ երկրներում։ (Համեմ. Պետերբուրգի գիտութեանց ձեմարանի նախաձեռնութիւնն այս հարցում Ռուսաստանում և այլ նման միջոցներ արտասահմանում)։

Այժմ մի փոքր աւելի կանգ առնենք բարբառաբանութեան վրայ և աշխատենք բացատրել նախ և առաջ

VI. Բարբառաբանութեան նշանակութիւնը.—Բարբառաբանութիւնը բացի վերոյիշեալ հիմնական նշանակութիւնից լեզուի պատմութեան համար ունի և մի քանի այլ կարեւոր կողմեր։

ա. Բարբառների ուսումնասիրութիւնը կորքեկտիւ է պատմութեան։ Պատմութիւնը մինչև վերջի ժամանակներս քիչ է հասարքը ունել հասարակութեամբ։ Նա պահել է նուաճումների, պատերազմների, կոտորածների և սրածութիւնների անվերջ շարքեր, իսկ հասարակութեան վերաբերեալ շատ կարեւոր հարցեր անուշադիր է թողել. այդպիսի կարեւոր հարցերից է և գաղթերի, մանաւանդ խաղաղ գաղթերի հարցը. այդ հարցը լուսաբանել կարող է միայն բարբառաբանութիւնը։

բ. Մեր մատենագրութեան հին յիշատակարանների ընագիրները աւելի ճիշտ կարող են ըմբռնելի դառնալ բարբառաբանութեան օգնութեամբ. բազմաթիւ բառեր և դարձուածքներ, որոնք տեղ են գտել այս կամ այն յիշատակարանում, բայց գործածութիւնից դուրս են մնացել, կարող են պահուած լինել այս կամ այն բարբառում. ուրիշ բառերի սկզբնական նշանակութիւնը փոխուել է ժամանակի ընթացքում գրական լեզուի մէջ, բայց կարող է նոյնութեամբ պահուած լինել բարբառներում։

դ. Մեր զրական լեզուի մէջ նկատում է ուժեղ ձգողում՝ օգտուել ժողովրդական լեզուի հաճատութիւնից։ Ներկայումս դա վերաբերում է դիմաւորապէս պոէզիային։ բայց արձակ գրուածքները ևս համարձակ կարող են օգտուել բարբառների բառամթերքից և ձևերից, որով լեզուն աւելի կը ճռխանայ և ձկունանայ։

դ. Բարբառների ուսումնասիրութիւնը հրապարակ է հանում բազմաթիւ լեզուական երևոյթներ, որոնք հետաքրքիր են և ուսումնասիրութեան նիւթ կարող են դառնալ ոչ միայն այս կամ այն լեզուի համար, այլ և լեզուի համար ընդհանրապէս։ Այդպիսով բարբառաբանութիւնը կարող է իւր ստացած հետևանքներով նպաստել լեզուի ծագման և զարգացման հարցերի լուծման։

բ. Վերջապէս ամեն մի ինտելիգենտ անձնաւորութիւն կարիք կը զգայ զաղափար կազմելու իւր մայրենի լեզուի ամրողջութեան մասին։ այդ զաղափարը կարելի է կազմել միայն բարբառաբանութեան տուեալներից։

VII. Ինչպէս պէտք է կատարուի բարբառների ուսումնասիրութիւնը։ — Ուսումնասիրութիւնը պէտք է կատարուի այն միջավայրում, որտեղ գործածական է ուսումնասիրութեան օրենկոտ բարբառը։ Միւս պահանջները նիւթի, պատմողի ևլն, մասին մենք չենք յիշում այստեղ։ Անհրաժեշտ է կազմել ֆոնեափառապէս ճիշտ զրի առած ստուար ժողովածու և բառարան։ Պէտք է կազմել բարբառի աշխարհագրութիւնը, բարբառը գործածող ժողովրդի պատմութիւնը և ճիշտ վիճակագրութիւն։ Հնարաւոր չափով պէտք է գտնել կամ ցոյց տալ այն բոլոր գրաւոր յիշտակարանները, որոնք գրուած են այդ բարբառի սահմաններում, չը մոռանալով և արձանագրութիւնները։

Նիւթը պատրաստելուց յետոյ կատարւում է բարբառի ուսումնասիրութիւնը։

Լիակատար ուսումնասիրութիւնը անհրաժեշտաբար պէտք է ունենայ Յ բաժին։ հնչիւնաբանութիւն, ձեաբանութիւն և շարահիւսութիւն։ Դրանցից կարեւորագոյնը հնչիւնաբանութիւնն է, որի վրայ և մենք կանգ կառնենք։

Բարբառի հնչիւնաքանութիւնը (ֆոնետիկա) կազմողը պէտք է լաւ ծանօթ լինի լեզուաբանութեան այդ մասի ներկայ գրութեան հետ: Ոչ միայն պէտք է կազմել այդ բարբառին յատուկ բոլոր հնչիւնների (սոնոր, աղմկային, իրացիոնալ, երկբարբառ) ցանկը, այլ և պէտք է տալ նրանց աբտասանութեան մանրամասն նկարագիրը:

2) Պէտք է առանձնապէս կանգ առնել հնչիւնական կազակցութիւնների և գրանց ժամանակ տեղի ունեցող զանազան օրէնքների վրայ (samdhi): Ահա թէ ինչ հարցեր կարող են օրենքու լինել այս բաժնի ըստ նորվեգացի հոչակաւոր բարբառաբան Օլաֆ Բրոկի (O. Broch).—Եքսկուրսիա և ռեկուրսիա.—պալատալիզացիա (քմայնացում) —լարիալզիացիա (շրթնայնացում) —լարիովելարիզացիա —նմանողութիւն և տարանմանութիւն (ասսիմիլիացիա և դիսսիմիլիացիա) —վանկ. —քանակութիւն. —չեշտ—առոգանութիւն (ինտոնացիա) ևն:

Եթէ կատարուած է գոհացուցիչ ուսումնասիրութիւն այս ծրագրով, որի ժամանակ անշուշտ ի նկատի առնուած կը լինին նոյն և նման երեսյթներ միւս ժամանակակից և հին բարբառներում (ի միջի այլոց և գրաբարում), բոլորովին աւելորդ կը լինի դիմել ընդունուուծ շարլոնին—ուսումնասիրուող բարբառի համեմատութեան գրաբարի հետ (առաւել ևս—զանազան նախալեզուների հետ) —և կարիք կը լինի կազմել բարբառի նկարագրական ձեռքբանութիւնը և շարահիւսութիւնը համապատասխան էքսկուրսներով:

VIII. Հայերէնի ուսումնասիրութեան միւս հերթական հարցերը. —Եթէ ապահովուի այդպիսով բարբառների ուսումնասիրութիւնը, հայերէնի ուսումնասիրութեան դորձը կը տրուի հաստատ հիմքերի վրայ: Զը մոռանանք, որ գժուարը հայերէնով դբաղուելու ճաշակ առաջացնելն է մեզանում, դրանից յետո, մենք միշտ կարող ենք յուսալ ապագայում աւելի պատրաստ ուժեր ունենալու: Վերջապէս մենք ունինք հայագիտական ամբիոններ Եւրոպայում և Մուսաստանում, որոնց վերահսկողութիւնը և միահամուռ աշխատանքը լիապէս ապահովում են մեր ձեռնարկութիւնը:

Այդպիսով մենք կունենանք բարբառների համեմատական քերականութիւն և նրանցից ստացած եզրակացութիւններ լեզուի պատմութեան համար:

Կարենը կը լինի այդ եզրակացութիւնները ճշգել զրաւոր յիշատակարանների վկայութեամբ, ուրիշ խօսքով— ձեռնարկել հին բարբառների և հին զրական լեզու էլօլիւցիայի ուսումնասիրութեան: Այդ ասպարիզում մենք ունինք փառաւրապէս զինուած առաջապահ դունդ—եւրոպական գիտնականների խումբը: Բայց այդ մասում ևս Ս. Էջմիածինը և ձեմարանը կարող են կատարել համեստ, բայց կարենը գեր, Ս. Էջմիածնում պէտք է կազմուի Էջմիածնի համառոտ մատենադարանի ձեռագրերի լիակատար ցուցակը գիտական նկարագրութեամբ (նոյնը կարենը է և միւս մատենադարանների համար), որ ունի առաջնակարգ կարեռութիւն ոչ միայն լեզուի ուսումնասիրութեան, այլ և հայ բանասիրութեան համար ընդհանուրապէս: Խիստ կարենը է հոգալ նաև այն մասին, որ զանազան եկեղեցիներում և մասնաւոր անձանց մօտ զըսնուած ձեռագրերը վերջապէս մուտք գործեն կենդրոնական մատենադարանները \*):

1823 թ. յուլիս 14-ին ոռուս բանասիրութեան վաստակաւոր մշակը—Մարոկ ուղղում էր մի գիտական ընկերութեան հետեւալ խօսքերը, «Թող ամբողջ Ռուսաստանը վերածուի մեզ մատչելի մի մատենադարանի, մենք չը պէտք է սահմանափակենք մեր գիտութիւնը հարիւրաւոր գրքերով, այլ նրանց անթիւ բազմութեամբ, որոնք անխման ընկած են վանքերում և եկեղեցիների պահեստարաններում... մթերանոցներում և նկուղներում, զուրկ արեի ճառագայթներից, ուր հաւաքուած են մատեանների և մազաղաթների կոյտեր միայն նրա համար, որ կրծող կենդանիները, որգերը, ժանդը և ապականութիւնը կարո-

\* ) Յոդուածս վերջացնելուց յետոյ իմացանք, որ այդ մասին արդէն հոգացուել է երջանկայիշատակ Մատթէոս Բ. կաթողիկոսի առանձին կոնդակով:

զանան ոչնչացնել նրանց յարմարագոյն և շուտափոյթ կերպով...»:

1891 թ. Գերմանիայում Վեցեներ այն միաքն էր արձարծում, որ բարբառների ուսումնասիրութեան համար պահանջուղի ծախքերը պէտք է պետութիւնը վերցնի իւր մլրայ...

Իսկ Ք. Պատկանեան 1869 թ. գանգատում էր. «Մեր խնդիրները, որոնցով մենք դիմել ենք զանազան անձանց, որ մեզ յօդուածներ ուղարկեն ժողովրդական բարբառներով, մեծ մասամբ մնացին անկատար», Աւագանուածը ողբում էր, որ միւս բարբառները անհետանում են, աեղի տալով Աստրախան—Երևանեան բարբառին, որ «հայ բարբառների բառամթերքը, որ տեղ չէ գտել զրաբարի բառարաններում, նոյնպէս խիստ արագ նուազում է, և սպառնում է անհետ կորչել մօտաւոր ապագայում»:

Սարօնի դիմումը մերժուեց, սակայն նրա ծրագիրն իրազործուեց շնորհիւ նրա անլուր անձնազոհութեան: Վեղեների առաջարկի ընդունուել—չընդունուելը մեզ յայտնի չէ, բայց գերմանիայում առանց պետութեան օժանդակութեան էլ ապահով կարելի է համարել ամեն մի դիտական ձեռնարկութիւն:

Իսկ Պատկանեանի կոչն այնպէս էլ մնաց ձայն բարբառոյ յանապատի...

Մեզ թւում է, թէ խնդիրն այժմ զրւում է աւելի իրական հողի վրայ և նրա իրազործումը կարելի է համարել հնարաւորութեան սահմաններում:

Հայերէնի ուսումնասիրութեան միւս հարցերը, որոնք շօշափուած են § Ա.ում, համեմատաբար աւելի հեռաւոր ապագայի կամ Ս. Էջմիածնի սահմաններից գուրս կտարուելիք գործեր են, ուստի նրանց վրայ կանգ տոնելն այս յօդուածում մենք կարենոր չենք համարում:

Դ. Սքրահամեան.